

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացու-  
թյունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի`  
օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Օտարերկրյա պետություններից և  
միջազգային կազմակերպություններից փոխառությունների և վարկերի ստացման գործընթացի  
կազմակերպման և այդ միջոցների օգտագործման վերահսկողության մասին» և «Վերահսկիչ  
պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հա-  
յաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից փոխառու-  
թյունների և վարկերի ստացման գործընթացի կազմակերպման և այդ միջոցների օգտագործ-  
ման վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբեր-  
յալ.

1. Նախագծի վերնագիրը չի համապատասխանում նախագծի բովանդակությանը, քանի  
որ նախագծում պարզապես ներկայացված է միջազգային վարկային պայմանագրի կնքման և  
նախապատրաստական աշխատանքներին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի  
մասնակցությունն ապահովելու վերաբերյալ ընթացակարգը, մինչդեռ ըստ վերնագրի, նախա-

գծով կարգավորման են ենթակա փոխառությունների և վարկերի ստացման գործընթացի կազմակերպման և այդ միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության հետ կապված հարցերը:

Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխում սահմանվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման ընթացակարգը, որում սահմանված չէ բացառություն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային վարկային պայմանագրերի մասով: Ուստի, ներկայացված օրինագիծը հակասում է «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

2. 3-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ այն հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածին, որի համաձայն իշխանությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Միջազգային պայմանագրերի կնքման ուղղությամբ աշխատանքներ իրականացնողը գործադիր իշխանությունն է, իսկ օրենսդիրը՝ այն վավերացնողը:

Բացի դրանից, հստակ չէ, թե Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի կողմից ձևավորվող աշխատանքային խումբն ինչ գործառույթներ է իրականացնելու, և ինչ ընթացակարգով են իրականացվելու այդ գործառույթները:

3. 4-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել, թե խոսքը որ «առանձին փուլերի» ավարտի մասին է: Հարկ ենք համարում նշել, որ միջազգային պայմանագրերի նախապատրաստական աշխատանքների փուլերը հստակ սահմանված են «Հայաստանի Հանրապետության

միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածներով և այդ առումով սույն հոդվածի դրույթը չի բխում նշված օրենքի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ ու 5-րդ գլուխների պահանջներից, որոնցում չի խոսվում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նման լիազորության կամ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության պարտավորության մասին: Հավելենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, և օրենքներով նրան այլ լիազորություններ վերապահելը կհակասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Նույնը վերաբերում է նախագծի 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներին:

4. 5-րդ հոդվածով սահմանված դրույթը նախագծի կարգավորման առարկան չէ: Այն «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում կարգավորվող հարց է:

5. 7-րդ հոդվածով նախատեսվող տվյալները (տեղեկությունները) հանդիսանում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ և 25-րդ, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածներով նախատեսված` Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացվող Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման հաշվետվության տարրեր:

Հոդվածով նախատեսվում է յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացնել տեղեկանք, մինչդեռ տեղեկանքի ստացումը վերահսկողություն իրականացնելու միջոց չէ: Ավելին, վերահսկողությունը ենթադրում է մի գործընթաց, որը պետք է ստուգի թեկուզև նշված տեղեկանքի իսկությունն ու տվյալների

հավաստիությունը: Ընդ որում, նախագծից պարզ չէ, թե ով է իրականացնելու վերահսկողությունը և ինչ ընթացակարգով: Նախագծով ներկայացված ընթացակարգը վերահսկողության իրականացման ընթացակարգ չէ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության պարտքային պարտավորությունների հետ կապված հիմնահարցերը կարգավորվում են «Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ նշված օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի գործունեության տարեկան ծրագիրը հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, ուստի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը կարող է Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի գործունեության տարեկան ծրագրի հաստատման ժամանակ ծրագրում ներառել կամ չներառել նախագծով նախատեսվող դրույթը:

Ամփոփելով շարադրվածը՝ ներկայացված նախագծերի փաթեթի վերաբերյալ հայտնում ենք, որ նախատեսված դրույթների մի մասը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին, իսկ մի մասն էլ արդեն իսկ կարգավորված է «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին», «Վերահսկիչ պալատի մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

Նախագծերը չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված օրենսդրական տեխնիկայի կանոններին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վարդան Արամյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-814-08.02.2010-ՖՎ-010/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**Օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից փոխառությունների եւ վարկերի ստացման գործընթացի կազմակերպման եւ այդ միջոցների օգտագործման վերահսկողության մասին**

**Հոդված 1.** Սույն օրենքը կարգավորում է օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից փոխառությունների եւ վարկերի ներգրավման եւ օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2.** Սույն օրենքի իմաստով միջազգային վարկային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության միջեւ ստորագրված գրավոր համաձայնություն է՝ Հայաստանի Հանրապետության կողմից փոխառություն կամ վարկ ստանալու մասին:

**Հոդված 3.** Միջազգային վարկային պայմանագրի կնքման ուղղությամբ աշխատանքները սկսելուց առաջ ՀՀ Վարչապետն այդ մասին տեղյակ է պահում Ազգային ժողովի նախագահին:

Միջազգային վարկային պայմանագրի մշակման եւ կնքման աշխատանքներին մասնակցելու համար Ազգային ժողովի նախագահի կողմից ձեւավորվում է աշխատանքային խումբ, որի կազմի մեջ ընդգրկվում են մեկական ներկայացուցիչներ Ազգային ժողովում ներկայացված խմբակցություններից:

**Հոդված 4.** Միջազգային վարկային պայմանագրի նախապատրաստական աշխատանքների առանձին փուլերի ավարտից հետո Կառավարությունը Ազգային ժողովին է տրամադրում այդ փուլերի արդյունքում մշակված փաստաթղթերը: Վերջիններս քննարկվում են համապատասխան մշտական հանձնաժողովներում՝ Կառավարության ներկայացուցչի մասնակցությամբ:

**Հոդված 5.** Միջազգային վարկային պայմանագրին կից Ազգային ժողով է ներկայացվում տեղեկանք, որն իր մեջ ներառում է վավերացման ենթակա պայմանագրի հիմնավորումը, ներգրավվող վարկային միջոցների օգտագործման հիմնական ուղղությունները եւ ժամանակացույցը, այդ միջոցների օգտագործումից ակնկալվող արդյունքները եւ դրանցից հիմնականների քանակական ցուցանիշները:

Ազգային ժողովը միջազգային վարկային պայմանագիրը վավերացնում է տվյալ պայմանագրի նախապատրաստական աշխատանքներին Ազգային ժողովի նախագահի կողմից ձեւավորված աշխատանքային խմբի եզրակացության առկայության դեպքում:

**Հոդված 6.** ՀՀ կառավարությունը վավերացված միջազգային վարկային պայմանագրերով նախատեսվող աշխատանքները մրցութային կարգով անցկացնելու դեպքում մրցութային հանձնաժողովների կազմում ընդգրկում է Ազգային ժողովում ներկայացված խմբակցությունների ներկայացուցիչներ: Վերջիններիս կազմը կառավարությանն է ներկայացնում Ազգային ժողովի նախագահը:

**Հոդված 7.** Կառավարությունն Ազգային ժողովի կողմից միջազգային վարկային պայմանագիրը վավերացնելուց հետո եռամսյակը մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում տեղեկանք, որն իր մեջ ներառում է.

- ա) հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով վարկային միջոցի օգտագործման մասին տեղեկատվություն,
- բ) վարկային միջոցի օգտագործման արդյունավետության վերլուծություն,
- գ) փաստացի եւ ակնկալվող արդյունքների համեմատական վերլուծություն:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

*Նախագիծ*  
Պ-814<sup>1</sup>-08.02.2010-ՖՎ-010/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Վերահսկիչ պալատի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** «Վերահսկիչ պալատի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3.-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետեւյալ բովանդակությամբ. «Տարեկան ծրագրում պարտադիր ներառման է ենթակա օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացման հարցը»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Է ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ

Տնտեսության ընդհանուր զարգացման եւ հատկապես ֆինանսական սահմանափակ հնարավորությունների դեպքում առաջնահերթ ու անհետաձգելի համարվող խնդիրների լուծման նպատակով յուրաքանչյուր երկիր կարող է այլ երկրներից եւ միջազգային կազմակերպություններից սահմանված կարգով ու չափով ներգրավել փոխառություններ եւ վարկային միջոցներ: Այս պրակտիկան երկար տարիներ գործում է Հայաստանում, սակայն դրանց օգտագործման արդյունավետության հարցը մինչեւ օրս շարունակում է մնալ վիճահարույց, քանի որ տվյալ գործընթացը չի իրականացվում անհրաժեշտ հիմնավորմամբ եւ թափանցիկությամբ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի, Ազգային ժողովը վավերացնում է վարկային պայմանագրերը, ինչով, ըստ էության, վերջանում է Ազգային ժողովի մասնակցությունը տվյալ հարցում: Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 77-ի համաձայն, «Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաեւ օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների եւ վարկերի օգտագործման նկատմամբ: Սակայն, բերված դրույթի վերջին մասով պայմանավորված հարաբերությունների, իմ կարծիքով, ոչ ամբողջական կարգավորվածության պայմաններում Ազգային ժողովը գրկված է վարկային միջոցների օգտագործման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից:

Հարկ է նշել նաեւ, որ ՀՀ Սահմանադրությունում եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից փոխառությունների եւ վարկերի ստացման գործընթացի կազմակերպման, համապատասխան ծրագրերի նախապատրաստման, ինչպես նաեւ այդ միջոցների օգտագործման արդյունավետության ապահովման առումով Ազգային ժողովի մասնակցության մասին ուղղակիորեն չի նշվում: Միաժամանակ, տրամաբանական է, որ տվյալ գործընթացի առումով երկրի օրենսդիր մարմինը պետք է օժտված լինի այդ ուղղությամբ կատարվող նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տեղեկացված լինելու եւ անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդատվությամբ հանդես գալու հնարավորությամբ:

Ներկայացվող օրենքների նախագծերն ուղղված են օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից վարկային միջոցների ներգրավման վերաբերյալ պայմանագրերի մշակման եւ կնքման գործընթացներում ԱԺ-ի մասնակցության ապահովման մեխանիզմների ձեւավորմանը, ինչպես նաեւ վերջինիս կողմից այդ միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացման սահմանադրական պահանջի կատարմանը: